

## ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ

**ՉԱՐԻՔԵ ԵՒ ՉԱՐ ՄԱՐԴՈՑՄԵ  
հեռու մնալու համար կարդալ  
հետեւեալ սալմոսները.**

Չար մարդոցմէ զիս ազատէ՛ Տէր, զիս հեռու պահէ անխիղճ մարդոցմէ, որոնք իրենց սրտին մէջ չարիք կը նիւթեն եւ կրի հանելու պատրաստ են միշտ: Ամբարիշտներէն պահպանէ՝ զիս Տէր: Զիս հեռու պահէ անխիղճ մարդոցմէ, որոնք կը խորիին ամէն մէկ քայլս խափանել: Տիրոջ ըսի. «Իմ Աստուածս ես դուն: Լուէ՛, Տէր, իմ աղա- չանքս: Դուն իմ հզօր փրկիչս ես, Տէր, իմ Տէրս: Պատերազմի ժամանակ, գլուխս պաշտպանող Սաղաւարտն ես: Ամբարիշտ մարդոց ցանկութիւնները մի՛ կատարեր, Տէր, անոնց չար խոր- հուրդները յաջողութեամբ մի՛ պսակեր, որպէսզի շիպարտանան:»

Անիրաւ խօսքերով զիս պաշարող մարդիկ իրենց իսկ խօսքերով քող կոր- ծանին: Հրավառ կայծեր քող թափին անոնց վրայ, քող որ կրակը ձգուին, քող դժոխքին խորը ձգուին, ուրկէ ա՛ չելլեն բնաւ:

Չարախոս մարդը յաջողութիւն քող չգտնէ՛ կեանքին մէջ, անխիղճ մարդուն չարիքները քող զինք կործանեն:

Գիտեմ, որ դուն Տէր կը պաշտ- պանես աղքատին դատը, չքաւորին իրաւունքը: Ահա թէ ինչու արդարները պիտի գովերգեն քեզ, ուղիղ վարքով ապրող մարդիկը ներկայութեանդ պիտի բնակին:

(Սալմոն 140)

### ՀՈԳԵՒՈՐ ԽՈՂՀՐԱՏՈՒ

#### ԱՄԷՆ ԻՆՉ ՑՈՅՑ ՏՈՒՈՂ ՀԱՅԵԼԻՆ


Երանի թէ Աստուած իւրաքան- չիւր մարդու սրտին վրայ դրած ըլ- լար հայելի մը, որ կարենար ցոյց տալ մարդուն սրտին ներքին ծալքե- րը եւ հոգիին ամէնէն խորութկ տե- ղերը, եւ որքա՞ն պիտի զարմանա- յինք տեսնելով անչափ դառնութիւն, եսասիրութիւն ու նախանձ այդտեղ: Նման հայելի մը առայժմ չկայ: Բայց լաւ իմացիր սիրելի ընթերցող, որ այդ հայելին հանդէս պիտի գայ դա- տաստանի օրը, անհամար թիւով մարդոց ներկայութեան: Այդ հայե- լին Քրիստոսի դատաստանն է: Երբ մարդոց միջեւ երեւնանք՝ կրնանք ծածկել մեր նկարագիրը: Երբ մար- դոց հետ խօսինք՝ կրնանք խեղարիւ- րել նշմարտութիւնը: Բայց երբ կանգնինք ամենատես ու ամենագէտ Դատաւորին առջեւ, ինն ալ արդեօֆ պիտի համարձակի՞նք սուտով ծած- կել նշմարտութիւնը, կամ պիտի յաջողի՞նք սիրոյ սաւանին տակ ծածկել ատելութեան մաղճը:

**Սիրելի ընթերցող, ՁՐԱԳ թերքը  
ամէն Կիրակի կը բաժնուի մեր  
ժողովուրդին, Եկեղեցիներու  
բանկալին մօտ: Նաեւ՝  
Facebook-ի վրայ վիճուուլ «Jerak  
կամ ՃՐԱԳ», ապա սեղմել  
«Like»ը, կարդալու կամ ան-  
դամագրուելու համար:**

### ՀԱՍՑԵ

**ՃՐԱԳ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud,  
P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300 - [facebook-h.tz jerak ՃՐԱԳ թերք](http://facebook-h.tz jerak ՃՐԱԳ թերք)**

### ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ



ԺԱ. ՏԱՐԻ



ԲՈՒ ԽՈՍՔ ԻՄ ՈՖԵՐՈՒՄ ՑՈՒՑ Է ՈՒ ԽՄ ԾԱՇԽԱՆԵՐՈՒՄ ԼՈՅ  
(Ս. 119. 105)

Կիրակի, 9 ԴԵԿԵMBER 2018

ԹԻՒ 49

### ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՏՈՒՏԱՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Ես.37.14-38: Ա. ԹԱ. 1.1-12:

ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒՏԱՐԱՆԸ ԸՆ ԴՈՒԿԱՆՈՒ 14.12-24

Ապա Յիսուս տանտիրոջ ըսաւ. «Երբ ճաշի կամ ընթրիքի հրաւեր կու տաս, մի՛ կանչեր բարեկամներդ կամ եղբայրներդ, որպէսզի ըլլայ որ անոնք ալ քու հրաւերիդ փոխարէն քեզ հրաւերեն, եւ այս ձեւով քեզի հատուցում կատարած ըլլան: Ընդհակառակը, երբ ընդունելութիւն կը սարքես, կանչէ աղքատներն ու խեղանդաները, կաղերն ու կոյրերը եւ այն ատեն երանելի պիտի ըլլաս, որովհետեւ անոնք քեզի փոխարէնը՝ հատուցանելիք ոչինչ ունին եւ գիտցած եղի՛ր, որ քու հատուցումդ պիտի ստանաս արդարներու յարութեան ժամա- նակ»:

Երբ սեղանակիցներէն մէկը այս խօսքերը լսեց, Յիսուսի ըսաւ. «Երանի անոր, որ Աստուծոյ արքայութեան մէջ ճաշ պիտի ուտէ»:

Յիսուս անոնց հետեւեալ առակը պատմեց. «Մարդ մը կար, որ մեծ ընթրիք մը սարքեց եւ շատեր հրաւերեց: Ընթրիքի ժամուն, իր ծառան ղոկեց, որ- պէսզի հրաւերեալներուն ըստ. «Եկէք, ամէն ինչ պատրաստ է»: Յրաւեր- եալները սկսան մէկ առ մէկ հրաժարիլ: Առաջինը ըսաւ. «Ազարակ գնեցի. պէտք է երթամ եւ տեսնեմ զայն. հետեւաբար կը խնդրեմ, որ ներողամիտ գտնուի»: Միւսը ըսաւ. «Դինգ զոյգ եզ գնեցի. պէտք է երթամ փորձեն զանոնք. հետեւաբար կը խնդրեմ, որ ներողամիտ գտնուի»: Ուրիշ մը ըսաւ. «Տակաւին նոր ամուսնացայ. հետեւաբար չեմ կրնար գալ»: Ծառան վերադարձաւ եւ իր տիրոջ պատմեց անոնց ըսածները: Այն ատեն, տանտերը վրդոված ծառային ըսաւ. «Անմիջապէս քաղաք գնա՛ եւ հրապարակներուն ու փողոցներուն մէջ որքան որ աղքատ, խեղանդամ, կաղ եւ կոյր տեսնես, բոլորն ալ հոս բե՛ր»: Քիչ ետք, ծառան վերադարձալով իր տիրոջ ըսաւ. «Տէր, հրամանդ կատա- րեցի, բայց տակաւին տեղ կայ»: Տէրը ծառային հրամայեց. «Քաղաքն դուրս գնա՛ եւ ճամբաններուն վրայ ու դաշտերուն մէջ որու որ գտնես, ստիպէ՛ որ գայ, որպէսզի տունս լեցուի: Կ'ըսեմ ձեզի, որ առաջին հրաւերեալներէն ո՛ մէկը ինձի հետ ընթրիքի պիտի նստի»:

## ԿԻՐԱԿԱՆՈՐԵՎՅՅԱ ԾԱՇՈՒ ԸՆԹԵՐՑՈՒՅԾ

### ՊՈՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԱՄԱԿԸ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՆԵՐՈՒՄ

1.1-12

ՄԵՆՔ՝ Պօղոս, Սիդուանոս եւ Տիմոքէնոս, կը գրենք ձեզի՝ թեսադրութեցիներու եկեղեցիին, որ մեր Հօր Աստուծոյ եւ Տէր Յիսուս Քրիստոսի կը պատկանի: Թող Աստուած մեր Հայրը եւ Տէր Յիսուս Քրիստոս շնորհի եւ խաղաղութիւն պարգևեն ձեզի:

Եղբայրներ, պարտք կը զգանք եւ արդար կը գտնենք ձեզի համար միշտ գոհութիւն յայտնել Աստուծոյ, որովհետեւ ձեր հաւատքը հետզիետէ աւելի կ'անի եւ ձեզմէ իւրաքանչիւրին սկրը իրարու հանդէպ աւելի կը խորանայ: Աստուծոյ եկեղեցիներուն մենք կը պարծենանք ձեզմով, այն համբերութեան եւ հաւատքին համար, որ դուք ցուցաբերեցիք ձեր կրած բոլոր հալածանքներուն եւ նեղութիւններուն մէջ: Ձեր այդ համբերութիւնը եւ հաւատքը ապացոյց պիտի ըլլան Աստուծոյ արդար դատաստանին, որովհետեւ դուք արժանի պիտի ըլլան Աստուծոյ արքայութեան, որուն համար այդքան կը տանջուիք: Արդարեւ, Աստուծոյ համար արդարութիւն պիտի ըլլայ ձեզ չարչարանքները տանջանքով պատմել, իսկ ձեզի՝ տանջուածներուդ, հանգիստ պարգևել մեզի հետ միասին, երբ մեր Տէրը Յիսուս հրեշտակներու իր բանակով երկինքէն յայտնուի:

#### ԱՂՈԹՔ

Մի' յապաղիր ողորմելու ինձի, Տէ՛ր: Առանց Զու ներգործութեանդ բարին երբեք չի գործեր իմ մէջս, եւ սերմանաւածը չի բուսնիր հոգիիս անդատանին մէջ, որովհետեւ իմ մէջս նետուած Զու խօսքիդ սերմը, քաղեց չար թշնամին, եւ բուսածը չորցաւ տապէն, իսկ միւսը, փուշերուն մէջ իյնալով, խեղդուեցաւ ու չորցաւ:

Տէ՛ր, լծէ աչքերս, ինչպէս մշակը ամոլին, որ անդադար արտասուագոչ պաղատին Զեզի արժանի ըլլալու Զու ողորմութեանդ: ԵՓՐԵՄ ԱՍՈՐԻ

Անիկա բոցավառ կրակով պիտի պատմէ անոնք՝ որոնք կը մերժեն զԱստուած նանչնալ եւ հնազանդիլ մեր Տիրոց Յիսուս Քրիստոսի աւետարանին: Այն օրը այդպիսիները յաւիտենական մահուամբ պիտի պատժուին, զրկուելով Տիրոց ներկայութենէն եւ անոր փառաւոր զօրութենէն, երբ անիկա գայ իր սուրբքերուն մէջ փառաւորութենէն եւ բոլոր իրեն հաւատացողներուն հիացումին առարկայ ըլլալու: Այն օր պիտի գիտնաք թէ նշմարիտ էր ինչ որ յայտնեցինք ձեզի: Ահա թէ ինչու միշտ կ'աղօթենք ձեզի համար, որպէսզի Աստուած ձեզ արժանի ընէ այդ կոչումին, իր գօրութեամբ կատարէ ձեր բոլոր բարի փափաքները եւ արդիւնաւորէ ձեր հաւատքը, որպէսզի ձեզմով փառաւորուի մեր Տիրոց Յիսուս Քրիստոսի անունը, եւ դուք փառաւորուիք իրմով, մեր Աստուծոյն եւ Տիրոց Յիսուս Քրիստոսի պարգևեած շնորհովը:

## ՍՈՒՐԵՐԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ՄՐԲՈՑՆ՝ ՄԻՆԱՍԱՅՅ,  
ԵՐՄՈԳԻՆԵԱՅՅ, ԵՒԳՐԱՓՈՍԻ ԵՒ  
ԿԱՄԱՒՈՐ ԱՂՔԱՏԱՅՅ՝  
ՑՈՎՀԱՆՆՈՒ ԵՒ ԱԼԵՔՍԻԱՆՈՍԻ

Մինաս, Երմոգինէս եւ Եւգրափոս վկաներ 4-րդ դարուն, Մաքսիմիանոս կայսր, իր իշխանութեան տակ գտնուող խոռվայոյզ Աղեքսանդրիա քաղաքը խաղաղեցներու համար կը դրկէ Մինաս անունով ճարտասան եւ իմաստուն մարդ մը, որ իր առաքելութեան մէջ յաջողելով, կառավարիչ կը նշանակուի կայսրին կողմէ: Ան իր հետ Աղեքսանդրիա կը տանի նոյնպէս իմաստուն իր քարտուղարը՝ Եւգրափոս անունով:

Մինաս գաղտնաբար քրիստոնեայ հաւատացեալ մըն էր, սակայն իր ցուցաբերած բարեկամութիւնն ու օգնութիւնը հանդէպ քրիստոնեաներուն, առիթ կը հանդիսանան որպէսզի Աղեքսանդրիոյ մեծանուն հեթանոսները բացայացեն անոր քրիստոնէութիւնը եւ կայսրին դիմելով զահնկեց ընեն զինք:

Կայսրը Մինասին տեղ Աղեքսանդրիոյ կառավարիչ կը նշանակէ Երմոգինէս անունով նոյնպէս Աթենացի, իմաստուն եւ ճարտար մարդ մը, որ փոխարինելով Մինասը, յաճախ կը փորձէր ուրացութեան հրաւիրել նախկին կառավարիչը ու հեթանոսութեան դարձնել զայն: Ան նոյնիսկ կտրել կու տայ Մինասին լեզուն եւ աչքերը փորելով բանտ կը նետէ զայն: Սակայն երբ յաջորդ օրը Մինաս հրաշքով բժշկուած դուրս կու զայ բանտէն, Երմոգինէս կը զդշայ եւ ինք եւս դարձի կու զայ ու քրիստոնեայ կը մկրտուի: Այս լսելով կայսրը դատի կը կանչէ երկուքը, որոնց հետ նաեւ Եւգրափոս քարտուղարը:

Երեքն ալ չարչարանքներու կ'ենթարկուին եւ քաջաբար կը տոկան, պաշտպանելով իրենց հաւատագրը: Ապա կայսրը չհանդուրժելով Եւգրափոսի անարգանքին, որ համարձակ կը խայտառակէր զինք իրենց ամուր հաւատքէն հրաժարեցնել չկարենալուն համար, նախ կը սպաննէ քարտուղարը եւ ապա կը գլխատէ Մինաս ու Երմոգինէս վկաները, որոնք նահատակւելով Քրիստոսի անունին համար, արժանի կը դառնան Աստուծոյ Արքայութիւնը ժառանգելու:

Ինչո՞ւ համար Աւետարան կարդացած ատեն մոմեր կը բռնենք ու կը խնկարկենք

Օրէնքի խորհուրդ է, որովհետեւ երբ Աստուծած Մինա լերան վրայ իջաւ, որոտումներ, փայլակատումներ, փողերու հնչումներ եւ ծուխեր եղան եւ Մովսէսի միջոցաւ Խորայէլացիներուն տուաւ օրէնքը: Նոյնպէս, Նոր Ուխտի օրէնքը կը նկարագրէ, օրթի, պոսւխումէ, բուրվառի ձայնը՝ փողերու հնչիւններուն խորհրդանիշ, մոմերը՝ հուրի, խունկը՝ ծուխի: Սարկաւագը՝ որ Մովսէսի խորհրդանիշն է, նախ ծածկաբար քահանային դիմաց կը կարդայ եւ անկէ սորվելով, կը դառնայ դէպի ժողովուրդը ու բարձրաձայն կը կարդայ: Աւարտելին ետք ժողովուրդը կրկին անգամ Աստուծոյ փառք կու տայ, որ իր կամքը յայտնեց մարդոց: